«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

N 272/1-22

<< 29 >>__հունիսի_2022թ. ԼԻՑ 17384

Պատվիրատու՝ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Նախագծող՝ <<ԿԱՐՈՇԻՆՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ

Տնօրեն՝ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

<<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ-ն նախագծային փաստաթղթերի փորձաքննության է դիտարկում ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջի ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Գավառի նստավայրի նոր վարչական շենքի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը:

Նախահաշվային արժեքը կազմում է՝ 691 499.1 հազար դրամ , ներառյալ ԱԱՀ- ն:

Առդիր՝ եզրակացությունը 6 էջից:

Տնօրեն՝ **Ն. Սիրեկանյան**

«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ

տնօրեն Ն. Միրեկանյան

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջի ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Գավառի նստավայրի նոր վարչական շենքի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթեր

Պատվիրատու՝ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Նախագծող՝ <<ԿԱՐՈՇԻՆՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ

Տնօրեն՝ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Սույն նախագիծը կատարված է համաձայն պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

<<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ-ին տրամադրվել է թղթային տարբերակով ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթներ, որը իր մեջ ներառում է՝

1. Ելակետային տվյալ
2. Ճարտարապետաշինական մաս
   - Գլխավոր հատակագիծ
   - Ճարտարապետական մաս
   - Կոնստրուկտորական մաս
3. Ինժեներական մաս
4. Շինարարության կազմակերպում
5. Նախահաշվային մաս

<<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ-ն փաստաթղթերը ուսումնասիրել է՝ համաձայն 15.09.2021թ. կնքված ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/13 ծածկագրով պայմանագրի հավելված N1 տեխնիկական բնութագրի / ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և ԿԱՐՈՇԻՆՆԱԽԱԳԻԾ ՍՊԸ-ի միջև/ , Գավառի համայնքապետի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի և ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի հիման վրա:

Ելակետային տվյալներում ներառված են հետևյալ փաստաթղթերը՝

1. ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի կողմից տրամադրված լիցենզիայի /ՔՊL17181/ , ներդիրների և արտոնագրերի /ճարտարապետ, կանստրուկտոր/ պատճենները:

2. Գավառ համայնքի ղեկավարի կողմից տրված 31.03.2022թ. N013 նախագծման թույլտվությունը/ճարտարապետահատակագծային առաջադրանք/:
3. Անշարժ գույքի սեփականության վկայականը և հողամասի կոորդինատները:
4. ՀՀ առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնի հետ համաձայնեցումը:
5. ՀՀ Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի հետ համաձայնեցումը:
6. <<ԳԵՈԶՈՆ>> ՍՊԸ-ի կողմից տրված ինժեներկրաբանական եզրակացությունը ՀՀ Գեղարքունիքի մարզ Գավառ համայնք Կենտրոնական հրապարակ 2/1 թիվ 41 հասցեի տարածքի վերաբերյալ: / Լիցենզիա 17628/
7. Գազպրոմ արմենիա ՓԲԸ Գավառի ԳԳՄ-ի կողմից տրված 07 մարտ 2022թ. Գավառ քաղաքի Կենտրոնական հրապարակ 2/1 հասցեում ապագա շենքի գազամատակարարման տեխնիկական պայմանները:
8. ՀԷՑ ՓԲԸ-ի կողմից էլեկտրական ցանցին միացման տեխնիկական պայմանները:
9. Վեոլիա Ջուր ՓԲԸ-ի կողմից տրված 25.04.2022թ. -ին ջրագծի և կոյուղագծի միացման կետերը:

Նախագծով նախատեսվում է կառուցել երեք հարկանի նկուղային հարկով 18.8x27.0 մ առանցքային չափերով դատարանի շենք: Հարկի բարձրությունը 3.9 մ, իսկ նկուղինը 3.3 մ: Նկուղային հարկում տեղակայված են՝ էլ. վահանային սենյակը, իրեղեն ապացույցների սենյակը, սանհանգույցներ, իրեղեն ապացույցների սենյակը, սերվերի սենյակը, ամբաստանյալների սենյակները իրենց սանհանգույցներով, ազատ տարածքները նախատեսվում է օգտագործել որպես թաքստոցներ: Հարկերում տեղակայված են դատարանի անվտանգության ծառայողների սենյակ, գրասենյակներ, սանհանգույցներ, դատական դահլիճներ, գրադարանի արխիվի սենյակ: Հարկերի միջև տեղաշարժը իրականացվում է աստիճանավանդակներով և վերելակով: Գլխավոր աստիճանակը բարձրանում է մինչև տանիք: Տանիքում տեղակայված են կաթսայատունը և վերելակի մեքենայական բաժանմունքը: Դատարանի շենքը ունի երկու մուտք/ելք/՝ մուտքերը հարմարեցված են բնակչության սակավաշարժուն խմբերի տեղաշարժերի համար: Միջնորմերը իրականացվում են 10սմ և 20սմ հաստությամբ թեթևաբետոնե բլոկներից: Տանիքում տեղակայված կաթսայատան տանիքին տեղադրվում է ֆոտովոլտային և արևային համակարգի սարքավորումները: Շինության տանիքը հարթ տիպի է կազմակերպված ներքին ջրահեռացման համակարգով: Արտաքին պատերը իրականացվում են խարամաբետոնե բլոկներով 200 մմ հաստությամբ երկու տակ շարով: Շինությունը արտաքինից նախատեսվում է հարդարել բազալտե մանրաթելային

սալերով և երեսապատել գետնախարիսխի հատվածը սև տուֆի ու տրավերտինե երեսապատման սալիկներով, իսկ գետնախարիսխը բազալտե երեսապատման սալիկներով:

Դատարանի շենքի կոնստրուկտիվ համակարգը լուծված է տարածական կոշտ հանգույցներով միաձույլ երկաթբետոնե շրջանակային հիմնակմախքով:

Շենքի հիմնակմախքի հաշվարկը ուղղահայաց բեռնվածության և սեյսմիկ ազդեցությունների համար կատարված է համակարգչային ծրագրով ըստ ՀՀՇՆ 20.04-2020 Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմերի: Հաշվարկի ժամանակ օգտագործվել է՝

գրունտների կարգը 2-րդ,

գրունտային պայմանների գործակիցը - $K_0 = 1.0$,

թույլատրելի վնասվածքների գործակիցը - $K_1 = 0.40$

սեյսմաուժգնության գործակիցը - A=0.3

պատասխանատվության գործակիցը - $K_2 = 1.2$

հիմքերի տակ որպես գրունտներ ընդունված են բազալտե խիճ, մանրախիճ բեկորներ, պինդ թանձրության ավազակավի լցիչով:

Հաշվարկների ժամանակ բոլոր երկաթբետոնե կոնստրուկցիաների համար ընդունված են հետևյալ բնութագրերը՝ ծանր բետոն B25 դասի, երկայնական ամրանները - A500C դասի, լայնական ամրանները - A240 դասի:

Շինության բոլոր հիմնական կրող կոնստրուկցիաները իրականացվում են միաձույլ երկաթբետոնից: Հիմքերը խաչահատվող ժապավենային ուղղանկյուն հատվածքի 70x90սմ հեծաններով: Նկուղային հարկի արտաքին պատերը միաձույլ երկաթբետոնից 40սմ հաստությամբ, սյուները 40x40 սմ հատվածքի, հեծանները 40x57սմ հատվածքի: Ծածկերը իրականացվում են միաձույլ երկաթբետոնից 18 սմ հաստությամբ հոծ սալերով կրկնակի ամրանավորմամբ:

Դատարանի շենքի ջրամիացումը իրականացվում է հարակից տարածքում գտնվող ջրագծից պոլիէթիլենե խողովակներով, ջրագծի միացման կետում նախատեսվում է կառուցել դիտահոր: Նախատեսվում է կառուցել ջրաչափական դիտահոր: Ջրամատակարարման ներքին ցանցը փակուղային է: Հակահրդեհային անվտանգությունը ապահովելու համար նախատեսվում է տեղադրել հակահրդեհային ծորակներ: Մայրուղային խողովակները և հակահրդեհային կանգնակները նախատեսվում են պողպատե էլ.եռակցվող խողովակներով, տաք և սառը

ջրամատակարարման կանգնակները և սպառման խողովակաշարերը պոլիպրոպիլենե խողովակներից:

Կենցաղային կեղտաջրերը սանտեխնիկական սարքերից ինքնահոս հեռացվում են դեպի բակային տարածքում նախատեսված կոյուղու արտաքին ցանց և միացվում է գործող կոյուղու համակարգին: Համակարգի ներքին խողովակները նախատեսվում է իրականացնել 50 մմ և 110 մմ տրամագծի կոյուղու պոլիվինիլքլորիդե խողովակներից: Կոյուղու արտաքին համակարգը նախատեսվում է իրականացնել 150 մմ տրամագծի պոլիէթիլենային ծալքավոր լայնուկավոր խողովակներից, որը դիտահորորի միջոցով հեռանում է մինչև քաղաքային կոյուղու ցանց:

Ջեռուցումը նախատեսվում է իրականացնել կաթսայատնում տեղադրվող պատին ամրացվող երեք հատ կոնդենսացիոն գազի կաթսաների միջոցով՝ երկխողովականի ալյումինե ջեռուցման մարտկոցներով: Ջեռուցման մատակարարող և հետադարձ խողովակներով պոլիպրոպիլենե ալյումինե շերտով: Ջեռուցման մատակարարող և հետադարձ խողովակները մետաղական են, իսկ սարքավորումների արբերիչները պոլիպրոպիլենից: Արտաքին գազամատակարարման համակարգի կառուցում մինչև կաթսայատուն համաձայն տեխնիկական պայմանի, գազակարգավորիչ կայանի և հաշվիչ հանգույցի տեղադրում:

Շենքում նախատեսվում է տեղադրել օդորակիչներ և արտածող-ներածող օդափոխության համակարգ մեխանիկական դրդմամբ : Օդափոխության բոլոր համակարգերի վրա տեղադրվում են հակահրդեհային կրակապաշտպան կափույրներ, որոնք փակվում են ջերմաստիճանի բարձրացման դեպքում: Օդատարները իրականացվում են ցինկապատ թիթեղից:

Ներքին էլեկտրամատակարարման ցանցի սնուցման համար նախատեսվում է կառուցել վահանային սենյակ նկուղային հարկում, որտեղ տեղադրվում է գլխավոր բաշխիչ վահանը, վերելակի վահանը, օդափոխության և արտաքին լուսավորության վահանները: Վահանային սենյակից իրականացվում է լուսավորության վահանակների էլեկտրամատակարարումը: Հարկային լուսավորության վահանակներից իրականացվում է հարկի լուսավորության և վարդակների ցանցերի էլեկտրամատակարարման բաշխումը: Լույսի աղբյուր հանդիսանում են LED լուսատուները: Սենյակում ընդհանուր լուսավորության համար նախատեսված է լուսատուների տեղական կառավարում:

«ԱՐԽԻՏԵԿՏ»
"АРХИТЕКТ"
"ARCHITECT"
05547385

Նախատեսված է էվակուացիոն լուսավորություն, որը իրականացված է ելքի դռների վերնամասերում տեղադրված էվակուացիոն լույսերի և ելքի ցուցանակների միջոցով: Էլեկտրաէներգիայի ընդհատվելու դեպքում վերջիներս ավտոմատ կերպով միանում են իրենց մեջ ներկառուցված տեղային անկախ աղբյուրին ապահովելով 2 ժամյա աշխատանքին ռեժիմ, որը բավարար է տարահանման համար: Վահանակները տեղադրվում են հատակից 1.6մ բարձրության վրա, ընդհանուր նշանակության վարդակները 0.3 մ ,իսկ անջատիչները 0.9մ բարձրությամբ: Լուսավորության և խրոցակային վարդակների ցանցը անցկացվում է հրակայուն պղնձե մալուխով: Ներքին լուսավորության և վարդակների էլեկտրամատակարարման ցանցը իրականացվում է 3 լարանոց : Էլեկտրաուժային ցանցը իրականացվում է 5 լարանոց: Նախագծում նախատեսված է տարածքի արտաքին լուսավորություն , ստորգետնյա մալուխային գծերով: Արտաքին լուսավորության սնուցման և ղեկավարման վահանակը տեղադրվում է վահանային սենյակում: էլեկտրամատակարարումը իրականացվում է ստորգետնյա մալուխային գծերով: Ստորգետնյա սնուցման մալուխը անցկացվում է խրամուղու մեջ: Նախատեսվում է իրականացնել նոր հողանցման կոնտուր:

Նախատեսվում է դատարանի տարածքը հողամասի պարագծով իրականացնել քարե ցանկապատ երեսապատված տրավերտինե, բազալտե և ցեմենտավազե սվաղով: Նախատեսվում է արտաքին ինժեներական ցանցերի անցկացում՝ ջրամատակարարման և կոյուղու: Տարածքը նախատեսվում է կանաչապատել, բարեկարգել և տեղադրել նստարաններ, աղբամաններ: Տարածքում նախատեսվում է իրականացնել ասֆալտապատ ճանապարհներ և մայթեր պարփակված բազալտե մայթեզրերով: Շինության ամբողջ պարագծով իրականացվում է ասֆալտապատ սալվածքներ: Բակային տարածքում նախատեսվում է կառուցել մետաղական հիմնակմախքով շվաքարան նախատեսված 4 մեքենաների կայանման համար:

Նախահաշվային մաս

Աշխատանքների նախահաշվային արժեքը ներկայացված է ամփոփ հաշվարկով

Հաշվարկը կազմում է 691 499.1 հազար դրամ, ներառյալ ԱԱՀ:

Հաշվարկը կատարված է 1984թ. նորմերով և գներով կազմված տեղային նախահաշիվների հիման վրա, կիրառելով աշխատավարձի հաշվարկային ինդեքսը 1876.51 և մեքենաների շահագործման ինդեքսը 3045.88

Նյութերի արժեքն ընդունված է 2022թ. N 03 «Ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով :

1.Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:

2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմիյանց համապատասխան

3. Նախահաշվով նախատեսված ծավալները համապատասխանում են նախագծային ծավալներին

4.Աշխատանքային նախագծի կազմը համապատասխանեցված է ՀՀ քաղշին. նախարարի 11.09.2017 N 128-Ն հրամանով ամրագրված պահանջներին

5. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները, այլ ընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կազմակերպության հետ համատեղ:

<u>Ուսումնասիրելով ներկայացված նախագիծ- նախահաշիվը</u>

Փորձաքննությունը երաշխավորում է փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին, նախահաշիվը կարող է սահմանված կարգով պատվիրատուի կողմից ներկայացվել համաձայնեցման և հաստատման:

Ն. Սիրեկանյան

«ԱՐԽԻՏԵԿՏ»
"АРХИТЕКТ"
"ARCHITECT"
05547385

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ 17384

(լիցենզիայի համարը)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
(ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՊԱՀԱՆՋՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

(գործունեության տեսակը)

ՏՐՎԱԾ Է «13 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թ.» «ԱՐԽԻՏԵԿՏ » ՍՊԸ ՇԻՐԱԿ, ԳՅՈՒՄՐԻ, ՇԻՐԱԿԱՑՈՒ Փ, 83, 40 ԲՆ.

(Լիցենզիան տալու ամսաթիվը, իրավաբանական անձի անվանումն ու գտնվելու վայրը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար ազգանունը, անունն ու բնակության վայրը)

Գործունեության ժամկետը՝ ԱՆՍԱՀՄԱՆ

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

Վ. ՎԵՐՄԻՇՅԱՆ

(անուն, ազգանուն)